ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 133

«23» 11 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 54 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով, Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազի 1 հաստիքը նույն վարչական շրջանի ավագ դատախազի 1 հաստիքով, ինչպես նաև Տավուշի մարզի դատախազության դատախազի 1 հաստիքը նույն մարզի դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի փետրվարի 10-ի N 10 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 54 հրամանով հաստատված 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ բաժնի 16-րդ գլխի 58-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 9» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 10», իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 22» բառերը՝ «Ընդամենը՝ 23» բառերով.

2) 3-րդ բաժնի 21-րդ գլխի 79-րդ կետի «Դատախազության դատախազ 9» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 8», իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 19» բառերը՝ «Ընդամենը՝ 18» բառերով.

3) 3-րդ բաժնի 23-րդ գլխի 86-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 2» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 3», իսկ նույն գլխի 87-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը՝ «Դատախազության դատախազ 4» բառերով.

3) 4-րդ բաժնի 33-րդ գլխի 126-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 1» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 2», իսկ նույն գլխի 127-րդ կետի «Դատախազության դատախազ 3» բառերը՝ «Դատախազության դատախազ 2» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ